

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻԼԳԱՍԷՇԻ ԴԻԻՑԱԶՆԵՐԳՈՒԹԻՒՆԸ

ՍԻՒՆԱԿ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Կը շարունակենք ասուրական բնագիրը. սկիզբը՝ պակասաւոր. Գիլգամէշն ու էնկիդուեն հասած են մայրինեբու անտառին մայրադուռը՝ ահեղ Քուսմարբայի կողմէ պաշտպանուած. էնկիդուեն կ'ըսէ իր բնկերոջ՝ Գիլգամէշին:

39. — «[Յիշէ թէ լինէ] ըսիր Ուրուկ[ի մէջ].
40. — [Ել] եւ կանգնէ [որպէսզի գինքն սպաննել կարենաս].
41. — [. Գիլ]գամէշ՝ շառաւիղն Ուրուկի . . .
42. — [Երբ Գիլգամէշ] լս[եց] խօսքերը [անոր] բերնին, մտաահու թեամբ լեցուեցաւ:
43. — «[Աճա]պարէ՛, մօտեցիր իրեն, որպէսզի ան չ
44. — [չիջնէ] անտառը ու
45. — սովոր է ան, եթէր վերարկուներ կրել:
46. — [մէկն է] հազած լոկ, վեցը (դեռ) հանուած են . . .
47. — Կատաղի վայրի եզի մը պէս . . .
48. — ետ քաշուեցաւ լի
49. — անտառին դէտը կը կանչէ
50. — Քուսմարբան՝ զերթ . . .

ՍԻՒՆԱԿ ՎԵՑԵՐՈՐԴ

Սկիզբը՝ պակասաւոր:

23. — [էնկիդուեն] բացաւ իր [բերանը] ու [խօսե]ցաւ, [ըսելով Գիլգամէշին]:
24. — «[Բարեկամ], չիջ[նենք] [անտառը].
25. — [երբ բա]ցի [մայր դուռը, ձեռքս] թուցաւ . . .
26. — [Գիլ]գամէշ բացաւ իր բերանը ու խօսեցաւ, ըսելով [էնկիդուենին]:
27. — « բարեկամ, տկար արարածի մը հանգոյն . . .
28. — [. մենք] անցանք այդ բոլոր (?)
29. — . . . մեր առջեւն է

30. — [Բարեկամ] (որ) եփուն (եռ) մարտի մէջ, ճ[արտար] կոռւի մէջ.
31. — . . . հզիր, ու պիտի չստակաս [մահէն]:
32. — . . . Ինծի հետ . . .
33. — . . . թմրուկը, զոր կ'ըսէինք . . .
34. — Թող վերնայ ուստպառուսը քու բազուկէն, ու տկարութիւնը անցնի [քու ձեռքէն]:
35. — . . . բարեկամ, [իջ]նենք միասին [անտառը].
36. — Թող քու սիրտն . . . մարտի մէջ. մոռցի՛ր մահը, ու մի՛
37. — . . . մարդ մը խիզախ (ու) շրջահայեաց:
38. — [Ով որ] կ'երթայ [առջեւէն] կը պաշտպանն իր անձը, (ու) կը թեւարկէ ընկերը:
39. — [Երբ յի]նան, անուն մը կը կերտեն իրենց համարը:
40. — Հասան երկուքը, [դա]լար լեռը:
41. — [Դադ]րեցաւ իրենց խօսակցութիւնը, (ու) մնացին անշարժ:

ՏԱՍՏԱԿ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՍԻՒՆԱԿ ԱՌԱՋԻՆ

1. — Անշարժ կեցան ու ակնապիշ դիտեցին անտառը:
2. — Կը նայէին մայրինեբու հասակին:
3. — Կը դիտէին անտառին մուտքը:
4. — Ուր որ Քուսմարբան սովոր էր քալել, ուղի մը կար:
5. — Շաւիղներն էին ուղիղ, ու անցքը հեշտին:
6. — Կը դիտէին մայրինեբու լեռը՝ բնակավայրը աստուածներու՝ դահուքը իրնիննի(⁶⁴):
7. — Լերան առջեւ, մայրինեբու կը ցուցադրէին(⁶⁵) իրենց լիութիւնը:
8. — անոնց չուքն էր [ա]ղու. հեշտաղ:
9. — [ծած]կուած էր մացառքը, ծածկուած
10. —
11. — . . . փարսախ մը . . .

(⁶⁴) Իշտար դիցուհւոյ ձե մը:

(⁶⁵) Բնագիրը ունի եզակի — isu erini na-shi hi-sib-shu:

12. — . . . երկու - երրորդը . . .

13-16. — (փճացած) :

ՍԻՒՆԱԿ ԵՐԿՐՈՐԴ

1. — [եր]կար ժամանակէ մը ի վեր, թուր
մը . . .
2. — [որ] սկսեալ . . .
3. — . . . թող կործանին . . .
4. — զա[ւոյն] մը, . . . սուսեր մը . . .
5. — . . .
6. — ծածկ[ուած է] . . .
7. — Քուսմարա[րան] . . .
8. — չի գ[ա]ր . . .
9. — չի գ[ա]ր . . .
- 10-16. — (լրատ).
17. — էնիւ . . .
18. — էնկիդուն [բացաւ] իր բերանը [ու
րսաւ Գիլգամէշին] :
19. — « . . . Քուսմարա . . .
20. — [երազ] մը, [ուրիշ] մըն ալ . . .
21. — . . .
22. — խախտելով . . .
23. — [թ]ող փճացնել տայ (?) :
24. — [Բարեկամ], թող ըլլան եր[էք (?)]. . .
25. — . . . զօրաւոր . . .
- 26-27. — . . .

ՍԻՒՆԱԿ ԵՐԿՐՈՐԴ

32. — «[Երկրորդ եր]ազը զօր [տես]այ . . .
33. — Լեռնակիրճերու [մէջ կը գտնուէ-
ինք (?)].
34. — [Լեռ մը] գլորեցաւ . . .
35. — Եղէզնուտի պղտիկ ճանճերուն պէս
[էինք] :
36. — [Ան որ] ծնած էր ար[ձակադաշտի
. . .] վրայ :
37. — էնկիդուն [ըսաւ] իր բարեկամին,
ե[րազը] [մեկնելով] :
38. — [Բար]եկամ, [քու] երազն է նպաս-
տաւոր . . .
39. — [Եր]ազն է սքանչելի . . .
40. — [Բար]եկամ, Լեռը զօր տեսար [Քուսմ-
արան է] :
41. — Պիտի բո[նենք] Քուսմարան, [պի-
տի զինքը մեռցնենք],
42. — ու [պիտի] իր գիւղը [նետենք]
դաշտը . . .
43. — Առաւօտուն . . .

Պողոտքէօյէն արտահանուած բնագրի մը
վրայ, արձանագրուած կը գտնենք նման-
օրինակ երազ մը, հրատարակուած E. Weid-
nerի կողմէ, Keilschrifturkunden aus Boghaz-
köiի մէջ, Heft IV, Berlin, 1922, թիւ 12 :

5. — Բանեցին իրարու (ձեռքէն ու) գա-
ցին երեկոյեան հանգստեան :
6. — Նինջը՝ զօր գիշերը կը հեղու, նուա-
ճեց [գիրենք] :
7. — Կէս գիշերին, քունը [հեռացաւ]
իրմէ ⁽⁶⁶⁾ :
8. — Պատեց երազը էնկիդուն [իր
բա]րեկամին :
9. — «Եթէ դուն զիս չարթնցուցիր, ին-
չո՞ւ [արթնցայ].
10. — էնկիդուն՝ իմ բարեկամ, տեսայ [երկ-
րորդ] երազ մը :
11. — զիս չարթնցուցի՞ր, ինչո՞ւ . . .
12. — Առաջին երազէս զատ, երկրորդ մը
[տեսայ] . . .
13. — երազիս մէջ, բարեկամ, Լեռ մը
[գլորեցաւ].
14. — Բազխեցաւ ինծի, բանեց օտքերս . . .
15. — Լուսաւորութիւնը կը զօրանար,
մա[րդ] մը [երեւցաւ] :
16. — Գեղեցկա[գօյնն] էր ան երկրին, իր
վայելչութիւնն [էր բացառիկ] :
17. — Լեռան տակէն զիս քաշեց . . .
18. — Զուր տուաւ ինծի ըմպելու համար.
սիրտս հան[դարտեցաւ] :
19. — Գետին վրայ զետեղեց [իմ] օտ-
քերը . . .
20. — էնկիդուն ըսաւ իր աստծոյն . . .
21. — Գիլգամէշին :
22. — «Բարեկամ, եր[թա]նք :

Մնացեալը՝ հատուածական : Կը շարու-
նակենք ասուրական բնագիրը :

44. — Քսան փարսախէ [վերջ], [պատառ
մը] կար[եցին] (կերան) :
45. — Երեսուն (յաւելուածական) փարսախ
վերջ, Կանգ առին [գիշերուայ հա-
մար] :
46. — Շամաշի առաջ, հոր մը փորեցին . . .
47. — Գիլգամէշ [Լեռը] բարձրացաւ . . .
48. — հեղեց իր նաշիւը . . .

(66) Գիլգամէշին :

49. — «Ո՞վ լեռ, բե՛ր երազ մը . . .
50. — քրէ անոր համար . . .

Ա Ի Ո Ն Կ Զ Ո Ր Ր Ո Ր Դ

1. — [Լեռը] բերաւ երազ մը էնկիզուին համար:
2. — Ըրաւ[ւ] անոր համար . . .
3. — Յուրա տարափ մը [ան]ցաւ . . .
4. — Կծկիւ [տուաւ] զինքը . . .
5. — . . . ու լեռան հունտին նման . . .
6. — [Գիւ]ղամէշ [իւր] ծունկերուն վրայ կրթնցուց իր ծնօտը:
7. — [նին]ջը որ կը հեղու մարդոց վրայ, ինկաւ (իջաւ) իր վրայ:
8. — Կէս (գիշեր)[ին], աւարտեց իր քուները:
9. — Ելաւ ու ըսաւ իր բարեկամին:
10. — «Բարեկամ, արդե՞օք զիս չկանչեցիր, ինչո՞ւ արթնցայ:
11. — Արդե՞օք չհպար ինձի, ինչո՞ւ զարհուրած եմ:
12. — Աստուած մը չանցա՞ւ արդեօք, ինչո՞ւ անդամներս են սարսուռն:
13. — Բարեկա՞մ, տեսայ երբորդ երազ մը:
14. — ու անուրջը զոր տեսայ, սոսկալի էր բոլորովին:
15. — Երկինքը կ'ոռնար, երկիրը կ'որոտար:
16. — [ցերեկը] նուաղեցաւ, խաւարը եկաւ:
17. — չանթը [կը] փայտատակ[էր], կրակը կը բորբոքէր:
18. — [ամպերը] կ'ուռէին, տեղալով մահ:
19. — լուսաւորութիւնը կ'ան[հետանար], հուրը կը մարէր:
20. — [ու ինչ որ] կ'իյնար, մօխը կը վերածուէր:
21. — [ե՛կ], ի[ջնենք] գաշալ, որպէսզի խորհրդակցիլ կարենանք միասին:
22. — [Երբ] էնկիզու [լսեց] երազը, որ ան պարզեց իրեն, ըսաւ Գիւղամէշին:

Ո՞նայեալ մօտը՝ կորսուած . այս լրատը կ'ամրոգջացնենք, հիտիտական բնագրով մը, հրատարակուած J. Friedrich-ի կողմէ, Zeitschrift für Assyriologie-ի մէջ, 1929, XXXIX, էջ 8 . . .

7. — [Գիւղամէշ] առաւ [կացինը իր ձեռքին մէջ],
8. — [ու] տապալեց [մայրին]:
9. — [Բայց երբ Քուվափան] լսեց աղմուկը (?),
10. — զայրացաւ (ու ըսաւ): «Ո՞վ է եկած,
11. — [ու խոսոված ծառերը որոնք] աճած են իմ լեռներուն վրայ,
12. — ու տապալած մայրին:
13. — [Այն ատեն] երկնային Շամաշը խօսեցաւ անոնց՝
14. — Երկնքէն: «Մօտեցէք
15. — մի երկնչիք . . .

Կորսուածք: Ուրիշ Հիտիտերէն հաւաքած մը կը շարունակէ. տե՛ս, վերայիշեալ աղբիւրը, էջ 11-13:

6. — Իր արցունքները [կը յորդէին] հեղեղանման,
7. — ու Գիւղամէշ [ըսաւ] աստուծային Շամաշին:
- 8-9. — (Հատուածական թարգմանուելու համար):
10. — «[Հետե]ւեցայ երկ[նա]յին Շամաշին,
11. — ու հետեւեցայ ուղիին սահմանուած] [ինձ համար]:»
12. — Երկնային Շամաշը լսեց Գիւղամէշի աղօթքը:
13. — ու սաստիկ քամիներ կ'ելլեն Քուվափայի դէմ:
14. — Մեծ հովը, հիւսիսային հողմը . . .
15. — փոթորիկը, ցուրտ քամին, ամպեր[ու]րը,
16. — տաք հովը: Ութը հողմեր ելան իր դէմ,
17. — ու կը բաղխին [Քուվափայի] աչքերուն:
18. — ան ոչ կրնայ առջեւ երթալ,
19. — եւ ոչ ետեւ:
20. — Այն ատեն Քուվափան տեղի տուաւ:
21. — Քուվափան ըսաւ Գիւղամէշին:
22. — «Թող ասոր որ երթամ, Գիւղամէշ, իմ [տէրը] [պիտի ըլլա]՞ր դուն,
23. — ու ես քու ծառան ըլլամ պիտի, եւ [ծառերը],
24. — զորս մեծցուցած եմ [իմ լեռներուն վրայ] . . .
25. — զօրաւոր . . .

26. — [պիտի] կար[իմ] ու [կանգնեմ պիտի քեզի] տուներն:
27. — Բայց էնկիդուն [ըսաւ] [Գիլգամէշ]ին:
- 28-29. — «Ի՛նչ [անսար] խօսք[ի]ն, դոր Բուզաման [է արտաբերած].
30. — Բուզաման [պէտք] է [միայ ողջ]»:

Շարունակութիւնը այս սիւնակին, կը թուի պահուած ըլլալ, R. Campbell Thompson-ի, The Epic of Gilgamesh երկին՝ տասնեւիններորդ՝ հատուածական աստիճան տախտակի, քառասուն եօթներորդ տողին մէջ, որ կ'ըսէ: — «[Կարեցին] Բուժբարաշին գլուխը: Ապա, երկու բարեկամները՝ Գիլգամէշն ու էնկիդուն կը վերադառնան Ուրուկ. Pritchard, Ancient . . . էջ 83:

ՏԱՆՏԱԿ ՎԵՅԵՐՈՐԴ

1. — Ան⁽⁶⁷⁾ լուաց իր աղտոտ հերը, փայլեցուց իր զէնքերը.
2. — մազն իր գլխուն, թօթափեց իր ուսերուն վրայ.
3. — նետեց իր աղտոտ (զգեստները), հագաւ իր մաքուրները.
4. — փաթթուցաւ ծոպաւոր թիկնոցով մը, ու կապեց գօտի մը.
5. — երբ Գիլգամէշ զրաւ իր խոյրը,
6. — մեծն իշտար, բարձրացուց (իր) աչքերը Գիլգամէշի գեղութեան:
7. — «Ե՛կ, Գիլգամէշ, եզիր (իմ) կողակիցը.
8. — շնորհէ ինձի քու պտուղը իրրեւ պարգեւ.
9. — եզիր դու իմ ամուսինը, եւ ես քու կինը.
10. — պիտի լծել տամ քեզ համար, կառք մը լրջաքարէ եւ ոսկիէ,
11. — որուն անիւներն են ոսկի, ու եղջիւրները
12. — փոթորիկ - գեւեր (փոխան) մեծ ջորիներու պիտի կապես (անոր).
13. — մայրինեւրու բոյրին մէջ պիտի մեր տունը մտնես.
14. — երբ մտնես մեր տունը,
15. — չեմի (ու) զահը պիտի քու ոտքերն համբուրեն.

16. — պիտի քու առջեւ խոնարհին, արքաներ, տէրեր, իշխաններ.
17. — իրրեւ հարկ պիտի բերեն քեզ [բերքը] լերան ու դաշտի.
18. — քու այձերը պիտի կրեն երբեականեր, քու ոչխարները երկուսերեականեր.
19. — քու բեռնատար էշը պիտի գերազանցէ ջորին.
20. — ձիերը քու կառքին, պիտի ըլլան հաշակաւոր արշալի մէջ.
21. — [քու եղը] լուծիներքեւ պիտի չունենայ ոչ մէկ մրցակից:
22. — [Գիլգամէշ] բացաւ իր բերանը ու ըսաւ,
23. — [ուղղելով] մեծն իշտարին:
24. — «Բայց ի՞նչ պէտք է տամ քեզ, եթէ անեմ քեզ ամուսնութեան.
25. — [չունի՞ս արդէն իւր]՝ մարմին[ի], եւ զգեստեղէն.
26. — [կը պակսի՞ քեզի] հաց եւ անդեղէն,
27. — աստուածաժայել ուտեստ.
28. — ըմպել[ի]ք՝ արքայաժայել.
29. —
30. — թող քու տեղն ըլլայ.
31. — . . . [պիտի] հազ[նիմ] վերաբուս մը.
32. — [. եթէ] ամուսնութեան քեզ անեմ.
33. — [դուն] ցորտին.
34. — ետեւի դուռ մը [որ է՝] արգիլներ, ոչ հողմը, ոչ մրրիկը.
35. — ապարանք մը, որ կը ճգ[մէ] զիւցազները . . .
36. — փաթթոց⁽⁶⁸⁾ մը . . . որուն քողը,
37. — ձիւթ մը որ [կ'աղտոտէ] զայն կրողը.
38. — տիկ մը որ [կը թըջէ] զայն կրողը.
39. — կրաքար մը, որ [կը խորտակէ] քարէ պատուարը.
40. — յասպիս մը [որ է՝ անցնի իրրեւ յունութք] օսոխ երկրին [մէջ].
41. — տրեխ մը որ [կը վերաւորէ(?)][ոտքն] իր տիրոջ.
42. — ռ՞բն է այն սիրահարը [զոր սիրեցիր դուն] ցմիշտ.
43. — ռ՞բը քու խաշնարածներէն հաճելի եղաւ [քեզ երկար ատեն].

(68) S⁶⁸ F. M. Böhl, Het Gilgamesj - Epos, Amsterdam, 1941, էջ 134. Նոյնպէս, James Pritchard, Ancient . . . էջ 84:

(67) Գիլգամէշը:

44. — Եկ, պիտի թու[եմ քեզ] քու սիրահարները .
45. — . . . դուն . . . իր ձեռքը :
46. — Թամմուզին⁽⁶⁹⁾՝ քու եր[խոտաբար]՝ դու թեան սիրահարին ,
47. — ողբ ոահմանեցիր անոր՝ տարուէ տարի .
48. — սիրեցիր խալտարդէտ ձախկը ,
49. — (սակայն) հարուածեցիր զայն , ու կոտորեցիր անոր թեւը .
50. — (ու) ան կը կենայ պուրակներուն մէջ , կանչելով «կապար»⁽⁷⁰⁾ :
51. — Սիրեցիր առիւծը՝ արիւթեամբ անթերի ,
52. — (եւ) փորեցիր անոր համար եօթը առաւել եօթը փոսեր :
53. — Սիրեցիր ձին՝ մարտի մէջ հոշակաւոր ,
54. — (սակայն) ոահմանեցիր անոր՝ խաղաղանը , խթանը ու փոկը .
55. — (ու) վճռեցիր (անոր) եօթը փարսախարչաւել .
56. — ոահմանեցիր անոր պղտորել (ջուրը) ըմպելէ (առաջ) .
57. — իր մօր՝ Սիլիլին՝ ողբ հրամայեցիր :
58. — Սիրեցիր հօտին հօվիւր ,
59. — [որ] անդադար կարկանդակներ՝ մոխրով պատրաստուած կը կուտէր քեզ համար .
60. — ու [հանա]պաղօր ամիկներ կը մորթէր քեզի .
61. — (սակայն) հարուածեցիր[զիւ] զայն , ու փոխեցիր զայն զայլի .
62. — իր խկ հովիւ պատանինը կը վտարեն զայն հիմա .
63. — ու իր շունները կը խածնեն իր սրունքները :
64. — Սիրեցիր Իշուլանուն՝ արմաւենիի պարտիզպանը քու հօր ,

65. — որ քեզ յաճախ կը բերէր կողովներ արմաւի (արմաւենիով լի) ,
66. — ու հանապաղօր կը պայծառացնէր քու սեղանը .
67. — բարձրացուցիր (քու) աչքերը անոր վրայ , ու զացիր անոր մօտ :
68. — «Ո՛վ իմ Իշուլանուն , (Եկ) , վայելենք քու առուգութիւնը .
69. — երկարէ քու ձեռքը , ու հպէ մեր աւթթխածութեան⁽⁷¹⁾ » :
70. — Իշուլանուն ըսաւ քեզի :
71. — «Ի՞նչ կը խնդրես ինձմէ .
72. — Հեփեց արդեօք իմ մայրը , Հեբայ .
73. — որպէսզի ուտեմ նախատինքի եւ անէծքի⁽⁷²⁾ ճաշը :
74. — Կնիւնները ցուրտի դէմ , [բա՞ւ են արդեօք իրբեւ] ծածկոյթ » :
75. — Երբ լսեցիր [իր] այս [ճառը] ,
76. — հարուածեցիր զինքը , (ու) փոխա[կերպեցիր զինքը] սարդի մը .
77. — բնակիլ տուիր զինքը մէջտեղը . . .
78. — Հի բարձրանար ան . . . Հիջներ ան . . .
79. — ու եթէ զիս սիրես պիտի , անոնց նման [պիտի վար]ուիս [ինծի հետ] » :
80. — Երբ Իշտար [լսեց] ասիկա ,
81. — Իշտար զայրացաւ ու [բարձրացաւ] զէպի երկինք :
82. — Իշտար գնաց [իր հօր]՝ Անուլի առջեւ ,
83. — գնաց իր մօր՝ Անտուի առջեւ , [ու ըսաւ] :
84. — «Հայրիկ , Դիլգամէշը անիծեց զիս .
85. — Դիլգամէշ հրուատեց իմ մեղքերը ,
86. — իմ յանցանքներն ու անէծք[ը]ներն » :
87. — Անուն բացաւ իր բերանը ու ըսաւ ,
88. — ու զգիւով մեծն Իշտարին :
89. — «Դ՛ուն հրաւիրեցիր

ԱՆՈՒՇԱԻԱՆ ԱԲՂ . ԶԳՋԱՆԵԱՆ

(Շարունակի՛ 10)

(69) Գարնան ու երկրագործութեան մարմնացում՝ մեռնող ու յարութիւն առնող աստուածութիւնն էր Թամմուզը , յիշեցնելով մեր Արա Գեղեցիկը . աեւ Ակադ . Գր . Ղափանցեան , Արա Գեղեցիկի պոետականք , Երեւան , 1945 : Հոս , մեր բնագիրը կ'անկնարկէ Թամմուզի համար կատարուած ողբի տարեկան հանդիսաւորութեան , եղեկ . Ը . 14 . «Եւ եմայժ զիս առաջի զբան տանն Տեառն , որ հայէր ընդ հիւսիսի , և ահա նստէին անդ կանայք և ողբային զԹամմուզ » : James B. Pritchard , Ancient . . . էջ 84 :

(70) Ակկադերէն բառ մը «թեւ» նշանակող :

(71) S6'w Revue d'Assyriologie, XVI, 1919, էջ 183, Նոյնպէս Pritchard, Ancient . . . էջ 84 :

(72) Archiv für Orientforschung, VIII, 1932/33, էջ 229, Pritchard, Ancient . . . էջ 84 :

